Վերականգնվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամի ինստիտուտը

ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամների ընտրությունները կայացան: Այսպիսով, չորս տարի անց վերականգնվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամի ինստիտուտը, որ վերացվել էր 1996 թ. կառավարության որոշմամբ:

Սպասումի այդքան երկար ժամանակը ՀՀ ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանը բացատրեց նրանով, որ գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին օրենքը, որտեղ սահմանված է տվյալ ինստիտուտի կարգավիճակը, խորհրդարանը միայն հիմա է ընդունել: «Տվյալ օրենքի առնչությամբ շատ խոսակցություններ եղան: Կան մարդիկ, որոնց համար այն գիտությունը, որը Հայաստանի հարստությունն է, այդքան թանկ չէ, եւ որոնք կցանկանային ակադեմիան վերածել ակումբի, - նշեց ՀՀ ԳԱԱ նախագահը: -Սակայն, օրենքն ընդունված է, եւ թղթակից անդամի ինստիտուտը վերականգնված է»:

Ֆադեյ Սարգսյանը նաեւ նշեց, որ պեսբյուջեի վաս վիճակը թույլ չի տալիս նշանակալիորեն մեծացնել երիտասարդ ուժերի ներհոսը Ազգային ակադեմիա, թեեւ գիտական երիտասարդության նեգրավման համար գործադրվում են բոլոր ջանքերը՝ լրացուցիչ միջոցների հայթայթում, միջազգային համագործակցություն, ինչպես նաեւ թղթակից անդամի ինստիտուտի վերականգնումը:

Անդրադառնալով ակադեմիայի Ֆինանսական կացությանը, նա հայտնեց, որ 1999 թ. հոկտեմբերի 1-ից պեսբյուջեից, բացի աշխատավարձերից, ոչ մի միջոց ՀՀ ԳԱԱ-ին չի հատկացվել, եւ նույնիսկ աշխատավարձը 2000 թվականի հուլիսից չի վճարվում: «Սակայն գիտությունը չի կարող ադրել միայն աշխատավարձով, անհրաժեշտ է ունենալ ջուր, լույս, տեխնիկա», - ընդգծեց ՀՀ ԳԱԱ նախագահը: Չի վճարվել նաեւ 70 մլն 400 հազար դրամը անհրաժեշտ վերանորոգման աշխատանքների համար, միջոցներ չեն տրամադրվել գիտական գրքերի եւ դարբերականների ձեռք բերման համար: